ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱՅԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Այս փաստաթուղթը սահմանում է Տավուշ Մեդիայի խմբագրական գործունեության հիմնական սկզբունքներն ու գործելակարգերը։ Այն ծառայում է որպես ներքին կանոնագիր՝ լրատվամիջոցի ամբողջ խմբագրական անձնակազմի համար՝ ուղղված անկախ, հավաստի, բազմակարծիք և հանրային շահը սպասարկող լրագրության ապահովմանը։

Մեր առաքելությունը

Տավուշ Մեդիան տրամադրում է վստահելի, հավաստի և օգտակար տեղեկատվություն՝ նպաստելով Տավուշի մարզի հանրային իրազեկվածությանը, ժողովրդավարության ամրապնդմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը։ Մենք ձգտում ենք հավասարակշռված, բազմակողմանի ու փաստահեն լրագրության՝ մեր համայնքին օգտակար լինելու գիտակցությամբ։

Ուղեցույցը տարածվում է խմբագրակազմի և համագործակցող գործընկերների վրա։

1. Ընդհանուր պրակտիկա

ա) Անանուն հրապարակումներ

Տավուշ Մեդիայի հոդվածները կարող են հրապարակվել անանուն կամ կեղծանունով միայն բացառիկ դեպքերում՝ երբ հեղինակի անվտանգությունը, անձնական տվյալները կամ աշխատանքային պայմանները կարող են վտանգվել։ Այդ որոշումը կայացնում է գլխավոր խմբագիրը։ Նման դեպքերում ընթերցողներին տեղեկացվում է հրապարակման անանուն լինելու մասին։

բ) Վճարներ խմբագրական նյութերի համար

Մենք սկզբունքորեն չենք վճարում աղբյուրներին՝ բացառությամբ ֆրիլանս լրագրողների, որոնց համար դա հաստատվում է խմբագրական մակարդակով։ Հանրային պաշտոնյաների, իշխանության ներկայացուցիչների կամ պետական ծառայողների հետ աշխատելիս խստորեն պահպանում ենք կոռուպցիոն ռիսկերից խուսափելու սկզբունքը։

գ) Ֆրիլանսեր անձնակազմ

Տավուշ Մեդիան հավատարիմ է ֆրիլանս լրագրողների հետ արդար և թափանցիկ համագործակցության սկզբունքներին՝ առաջնորդվելով միջազգային լավագույն փորձով։

դ) Գաղտնիություն

Տավուշ Մեդիայի ղեկավարներն ու խմբագիրները պարտավոր են պաշտպանել աշխատակիցների և աղբյուրների անձնական տվյալները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց տրամադրումը պահանջվում է օրենքով կամ խմբագրական որոշմամբ։

ե) Հեղինակային իրավունք

Մենք հարգում ենք հեղինակային իրավունքը։ Լրագրողները պետք է ստանան համապատասխան թույլտվություն երրորդ անձանց պատկանող նյութերը (լուսանկարներ, տեքստեր, գրաֆիկա և այլն) օգտագործելուց առաջ՝ բացառությամբ, երբ այն օգտագործվում է ակնհայտորեն արդար և օրենքով թույլատրելի ձևով՝ տեղեկացնելու կամ վերլուծելու նպատակով։

զ) Սխալներ

Մեր քաղաքականությունն է հնարավորինս արագ շտկել էական սխալները։ Բոլոր ընթերցողների բողոքները գրանցվում են և քննարկվում խմբագրի հետ՝ շտկման կամ հերքման հրապարակման նպատակով։

է) Իրավական հարցեր

Լրագրողները պետք է տեղեկացված լինեն զրպարտության, վիրավորանքի, անձնական կյանքի խախտման և հանրային շահի սահմանների մասին՝ իրավական պատասխանատվությունից խուսափելու համար։ Անորոշության դեպքում պարտադիր է խորհրդակցել իրավաբանի կամ խմբագրի հետ։

ը) Անձնական կյանքի պաշտպանություն

Մենք հարգում ենք մարդկանց անձնական կյանքը։ Միջամտությունը կարող է արդարացվել միայն հանրային հստակ անհրաժեշտության պարագայում՝ խմբագրական հաստատմամբ։

թ) Համագործակցություն հանրության հետ

Հարցումներին պատասխանում ենք քաղաքավարի ու ժամանակին՝ բոլոր հասանելի հարթակներով։ Սոցցանցերում պահպանում ենք լրագրողական էթիկայի սահմանները և խուսափում ենք կողմնակալ ու ապատեղեկատվական արտահայտություններից։

2. Խմբագրական կանոններ

ա) Ճշգրտություն և ստուգում

Տավուշ Մեդիայի լրագրողները պարտավոր են ստուգել բոլոր փաստերն ու տեղեկությունները՝ նախքան հրապարակելը։ Մենք վստահում ենք միայն հուսալի աղբյուրներին և նշում ենք, եթե որևէ տեղեկություն հնարավոր չի եղել ստուգել։

բ) Անանուն մեջբերումներ

Անանուն աղբյուրներ օգտագործվում են միայն այն դեպքում, երբ այլ կերպ հնարավոր չէ ստանալ հանրային կարևորություն ունեցող տեղեկատվություն։ Մենք երբեք չենք օգտագործում անանուն աղբյուրներ՝ որևէ մեկի դեմ չհիմնավորված մեղադրանքներ ներկայացնելու համար։

գ) Տեղեկատվության աղբյուրներ

Մենք պարտավոր ենք պահպանել մեզ տեղեկություն տրամադրած անձանց գաղտնիությունը՝ հատկապես, եթե նրանք կարող են վտանգի ենթարկվել։ Միևնույն ժամանակ՝ անհրաժեշտության դեպքում, պետք է ձգտել հնարավորինս բացահայտել աղբյուրի բնույթը։ Աղբյուրից վերցված նյութը՝ անկախ բովանդակության տեսակից, պետք է ուղեկցվի հղմամբ։

դ) Երեխաների մասին հաղորդումներ

Մինչև 18 տարեկան երեխաների վերաբերյալ նյութերը պատրաստվում են հատուկ զգուշությամբ։ Լրագրողները պարտավոր են ստանալ ծնողի կամ խնամակալի համաձայնությունը՝ երեխային լուսաբանելուց առաջ։

ե) Ուղղակի մեջբերումներ

Մեջբերումները պետք է փոխանցվեն հնարավորինս հստակ ու առանց իմաստի փոփոխության։ Մանր խմբագրումներ կարելի է կատարել միայն հստակեցման կամ ձևի բարելավման նպատակով, առանց բովանդակության աղավաղման։

զ) Հանրային աջակցություն

Լրագրողները չպետք է որևէ պարագայում համաձայնեն գովազդել հարցազրույց տվող անձանց կամ կառույցների՝ հասանելիություն ստանալու դիմաց։ Հնարավոր է միայն այն տեղեկության ներառում, որը իրականում օգտակար է հանրության համար և խմբագրական նյութի մաս է։

է) Արդարություն և բառապաշարի օգտագործում

Տավուշ Մեդիան կարևորում է բոլոր կողմերի ձայնի հավասար ներկայացում, հատկապես այն անձանց կամ կառույցների, որոնք քննադատության թիրախում են։ Մենք պարտավորվում ենք ապահովել հավասարակշռված և փաստարկված ներկայացում՝ ընթերցողին տրամադրելով ամբողջական պատկեր։ Մեր լեզուն պետք է լինի ներառական, հարգալից և չեզոք։ Խուսափում ենք ցանկացած արտահայտությունից, որն ունի վիրավորական, խտրական կամ բևեռացնող բնույթ, անկախ նրանից՝ այն ուղղված է անհատի, խմբի կամ համայնքի դեմ։

ը) Ապրումակցում

Վիշտ ապրող կամ ծանր կորուստ ունեցող անձանց լուսաբանելիս ցուցաբերում ենք լրացուցիչ զգայունություն։ Նրանց հետ աշխատելիս անհրաժեշտ է թույլտվություն և հարգալից մոտեցում։

թ) Նկարներ, պատկերներ և տեսանյութեր

Տեսողական բովանդակությունը չպետք է մանիպուլյացվել այնպես, որ փոխի դրա իրական իմաստը։ Եթե որևէ բան մոնտաժվել է, դա պետք է նշվի։

3. Շահերի բախում

Տավուշ Մեդիան գործում է որպես անկախ լրատվամիջոց՝ հասարակական վստահությունը որպես գերակայություն դիտարկելով։ Այս բաժինը սահմանում է, թե ինչպես պետք է խուսափել իրավիճակներից, երբ լրագրողի անձնական շահերը կարող են հակասել լրատվամիջոցի շահերին կամ վնասել նրա վստահելիությանը։

ա) Նվերներ և վճարներ

Աշխատակազմի անդամները չեն ընդունում որևէ նվեր, գումար կամ ծառայություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է ազդեցություն ունենալ նրանց անկախության կամ նյութի բովանդակության վրա։ Նման առաջարկների դեպքում պետք է անհապաղ տեղեկացնել խմբագրին։

Լրագրողները պետք է բացահայտեն, եթե որևէ երրորդ կողմ վճարել է իրենց ճանապարհորդության, կեցության կամ սննդի համար։ Այդ դեպքերում որոշումը՝ հրապարակել արդյոք նյութը, ընդունվում է խմբագրի հետ խորհրդակցությամբ։

բ) Առևտրային շահեր

Լրագրողները և խմբագիրները չպետք է գովազդեն ապրանք կամ ծառայություն՝ առանց խմբագրության նախապես տրված թույլտվության։ Տավուշ Մեդիան երբեք չի զբաղվում պատվերով գովազդային բովանդակության ստեղծմամբ՝ որպես խմբագրական նյութ։

գ) Արտաքին ներգրավվածություն

Տավուշ Մեդիայի աշխատակիցները կարող են ունենալ աշխատանքից դուրս հետաքրքրություններ կամ ներգրավվածություն, սակայն դրանք չպետք է հակասեն լրատվամիջոցի անկախությանը, բարեխղճությանը կամ վնասեն հանրային վստահությանը:

Տավուշ Մեդիայի լրագրողը կամ խմբագրակազմի որևէ անդամ չի կարող լինել որևէ քաղաքական կուսակցության անդամ կամ ներգրավված քաղաքական կուսակցական գործունեության մեջ: Սա ներառում է՝

- անդամակցություն կուսակցության,
- քարոզարշավին մասնակցություն,
- հանրային աջակցություն կուսակցական թեկնածուին կամ ուժին,
- կուսակցական միջոցառումների վարում կամ կազմակերպում:

Այս սահմանափակումը նպատակ ունի պաշտպանել լրատվամիջոցի խմբագրական չեզոքությունը և կանխել կողմնակալության ընկալումը:

Եթե աշխատակիցը պլանավորում է ներգրավվել որևէ այլ հասարակական կամ մասնագիտական կառույցում (օրինակ՝ ՀԿ, ակումբ, բիզնես նախաձեռնություն), որը կարող է ընկալվել որպես շահերի բախում, նա պարտավոր է նախապես տեղեկացնել գլխավոր խմբագրին:

դ) Շահերի բացահայտում

Եթե լրագրողը գրում է նյութ այն թեմայի շուրջ, որի հետ ունի անձնական կապ (ընտանիք, ընկերներ, նախորդ զբաղվածություն և այլն), դա պետք է բացահայտվի։ Ֆրիլանս աշխատակիցներն այս պահանջին ենթակա են նույն չափով, ինչ ներքին անձնակազմը։

ե) Կորպորատիվ շահերի բացահայտում

Եթե Տավուշ Մեդիան կապ ունի այլ կազմակերպության հետ՝ մասնաբաժնի, գործընկերության կամ դրամաշնորհի տեսքով, այն պետք է բացահայտվի՝ կապված նյութերում։ Աշխատակազմը պետք է ծանոթ լինի այդ կապերին։

Այս պահին Տավուշ Մեդիան անկախ է և չունի այլ լրատվամիջոցների կամ ընկերությունների հետ կապ, որոնք կարող են ազդել խմբագրական որոշումների վրա։

զ) Ֆինանսական շահեր

Տավուշ Մեդիայի լրագրողները չպետք է օգտագործեն ներքին տեղեկատվություն՝ անձնական կամ մտերիմների ֆինանսական շահ ստանալու նպատակով։

4. Մասնագիտական զարգացում

Տավուշ Մեդիան կարևորում և խրախուսում է աշխատակիցների շարունակական կրթությունն ու մասնագիտական աճը։ Մենք հավատում ենք, որ բարձր որակի լրագրությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ լրագրողը զարգացնում է իր հմտությունները և ընդլայնում գիտելիքները։

Լրատվամիջոցը խրախուսում է մասնակցությունը տեղական և միջազգային դասընթացների, սեմինարների, մեդիա ճամբարների և վերապատրաստման ծրագրերի՝ նոր գործիքներ, մեթոդներ ու մոտեցումներ ձեռք բերելու նպատակով։

Տավուշ Մեդիան հնարավորության սահմաններում աջակցում է նման նախաձեռնություններին:

Տավուշ Մեդիայի խմբագրական ուղեցույցը ենթակա է պարբերաբար վերանայման՝ նոր իրավական, տեխնոլոգիական և մեդիա զարգացումներին համապատասխանեցնելու նպատակով: Եթե լրագրողը կամ խմբագիրն ունի որևէ էթիկական կասկած կամ հարց, պարտադիր է դիմել գլխավոր խմբագրին: